ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԻՐԱԶ ՇԱՀԵՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր,
ՀՐԱՉՅԱ ՍԵՐԳԵՅԻ ԾՊՆԵՑՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ
ԱՎԵՏԻՍՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու,
ԻԼՈՆԱ ԶԱՎԵՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀԱԱՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
«ԽԱՂՈՂԱՊՏՂԱԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի հուլիսի 18-ին, ժամը 12^{00}-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ԲՈՀ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փողոց, 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի հունիսի 17-ին:

002 Մասնագիտական խորհրդի
գիտ. քարտուղար, դոցենտ Վ. Ս. Ալեքսանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Արմավիրի մարզը տասնամյակներ շարունակ հանդիսացել է հանրապետության բուսաբուծական մթերքներ արտադրող հիմնական գոտիներից մեկը: Մարզի բուսաբուծական մթերքների մեջ որակական բարձր հատկանիշներով, ինչպես նաև եկամտաբերության բարձր մակարդակով առանձնանում է պտղի և հատապտղի արտադրությունը: Մարզում արտադրված պտուղներն ու հատապտուղները մրցունակ են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Պտղի և հատապտղի տարածությունները ՀՀ-ում և Արմավիրի մարզում վերջին 20 տարիների տվյալներով դիտարկելիս, կարող ենք փաստել, որ 1995 թվականից սկսած պտղի և հատապտղի տարածությունները կրճատվել են, ինչը պայմանավորված է եղել սոցիալ-տնտեսական, քաղաքական, տարածաշրջանային հակամարտության խնդիրներով: 2000 թվականին՝ 1995 թվականի համեմատությամբ, հանրապետությունում պտղի և հատապտղի տարածությունները կրճատվել էին ավելի քան 30 տոկոսով՝ կազմելով 22.8 հազ. հա: Նույն ժամանակահատվածում Արմավիրի մարզում պտղի և հատապտղի տարածությունները կրճատվել էին շուրջ 35 տոկոսով: 2000 թվականից հետո պտղի և հատապտղի տարածություններն աճի միտում են ունեցել ինչպես ՀՀ ամբողջ տարածքում, այնպես էլ Արմավիրի մարզում: 2015 թվականի տվյալներով Հայաստանում պտղի և հատապտղի տարածությունները կազմել են 40.6 հազ.հա, իսկ Արմավիրի մարզում 8.5 հազ. հա, որը ՀՀ պտղի և հատապտղի տարածությունների 20.9 տոկոսն է կազմում: Արմավիրի մարզի տեսակարար կշիռը մեծ է նաև ՀՀ պտղի և հատապտղի համախառն արտադրանքի կառուցվածքում: 2015 թվականին մարզում արտադրվել է 98.1 հազ. տոննա պտուղ և հատապտուղ, որի տեսակարար կշիռը հանրապետությունում արտադրված պտղի և հատապտղի համախառն արտադրանքի կառուցվածքում կազմում է 25.4 %: 2013-2015 թվականներին միջին տվյալներով մարզի պտղաբուծության ճյուղի համախառն արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության պտղաբուծության համախառն արտադրանքի կառուցվածքում կազմել է շուրջ 23.0 %[1]:

ՀՀ-ում և ուսումնասիրվող Արմավիրի մարզում պտղաբուծության ճյուղի տնտեսական արդյունավետությունն ապահովող գործոնների բացահայտումն ու առկա հիմնախնդիրների լուծման ուղիների առաջադրումը պահանջում է պտղի և հատապտղի արտադրության, պահպանման և իրացման փուլերում ստեղծված իրավիճակի համակողմանի ուսումնասիրություն և հստակ ռազմավարության մշակում՝ ուղղված մարզում պտղի և հատապտղի արտադրության ավելացմանը և ճյուղի տնտեսական արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Նշվածն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունն ու հրատապու-

[1]Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2013թ., 2014թ., 2015թ., ՀՀ ԱՎԾ, Եր.-: 2014թ., 2015թ., 2016թ., էջ 33-35

թյունը, որը բխում է Արմավիրի մարզի և հանրապետության պտղաբուծության ճյուղի զարգացման անհրաժեշտությունից:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Հետազոտության հիմնական նպատակն է՝ ՀՀ Արմավիրի մարզի պտղաբուծության ներկա վիճակի ուսումնասիրությունը, զարգացման տնտեսագիտական հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների, քայլերի և միջոցառումների առաջադրումը: Նշված նպատակի իրագործմանն է ուղղվում հետևյալ հիմնական խնդիրները՝

- ուսումնասիրել պտղաբուծության դերն ու ճյուղի զարգացման միտումներին առնչվող տեսական հարցերը,
- ուսումնասիրել ՀՀ պտղաբուծության նշանակությունը և զարգացման մակարդակը ՀՀ ագրարային բարեփոխումների և գյուղատնտեսության առանձնահատկությունների համատեքստում,
- պտղաբուծության զարգացման տեսանկյունից ուսումնասիրել ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսության բնատնտեսական առանձնահատկությունները,
- ուսումնասիրել պտղաբուծության զարգացման տնտեսագիտական հիմնահարցերի էությունը և առանձնահատկությունները ՀՀ Արմավիրի մարզում,
- գնահատել պտղաբուծության արդյունավետության վրա ազդող գործոնները և դրանց քանակական ազդեցությունը,
- գնահատել Արմավիրի մարզում պտղաբուծության զարգացման հիմնախնդիրների լուծման հնարավորությունները,
- գնահատել պտղաբուծության ճյուղի բնական աղետներից պաշտպանության ենթակառուցվածքների արդյունավետությունը,
- առաջարկել պտղի և հատապտղի իրացման համակարգի բարելավման ուղիները,
- գնահատել պտղաբուծության զարգացման առաջարկվող ռազմավարական ուղղությունների և միջոցառումների տնտեսական արդյունավետությունը:

<u>Հետազոտության առարկան և օբյեկտը:</u> Հետազոտության առարկան հանդիսանում է ՀՀ և մասնավորապես Արմավիրի մարզի պտղաբուծության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, իսկ օբյեկտը՝ Արմավիրի մարզի պտղաբուծության ճյուղը, պտղաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները:

<u>Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:</u> Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրության հիմք են հանդիսացել տարբեր երկրների տնտեսագետների աշխատությունները, պտղաբուծության ճյուղի վերաբերյալ մասնագիտական գրականությունը, հրապարակումները, նորմատիվ-իրավական, ենթաօրենսդրական ակտերը: Ատենախոսության տեղեկատվական հիմքը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, հանրապետությունում գործող տարբեր կազմակերպությունների կողմից հրապարակված տեղեկագրերն ու տեղեկատվական-վերլուծական նյութերն են: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական ու գործոնային վերլուծություններ, տնտեսամաթեմատիկական, էմպիրիկ, համադրման, տրամաբանական մեթոդներ, գրաֆիկական գնահատումներ, հարցումներ և այլն:

<u>Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները:</u> Հանրապետությունում և ուսումնասիրվող մարզում պտղաբուծության ներկա վիճակի համակողմանի ուսումնասիրության և գնահատման հիման վրա առաջադրվել են պտղի և հատապտղի արտադրության արդյունավետության բարձրացման հիմնահարցերի լուծման ուղիները: Հիմնական գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով, մասնավորապես՝

- գնահատվել են ՀՀ Արմավիրի մարզում պտղի և հատապտղի արտադրության արդյունավետությունը պայմանավորող գործոնները և դրանց առանձնահատկությունները,
- էկոնոմետրիկ վերլուծության արդյունքում բացահայտվել է ՀՀ Արմավիրի մարզում պտղի և հատապտղի համախառն արտադրանքի արժեքի վրա տարբեր գործոնների (մարզում պտղի և հատապտղի բերքատու տարածությունների, միջին բերքատվության, ապրանքայնության մակարդակի, ՀՀ-ում աղքատության մակարդակի, ՀՀ Առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալների) ազդեցության չափը,
- մշակվել են պտղի և հատապտղի իրացման համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունները,
- գնահատվել է պտղի և հատապտղի տնկարկների բնական աղետների դեմ պայքարի առաջարկվող ենթակառուցվածքների արդյունավետությունը,
- մշակվել են մարզում պտղաբուծության զարգացման համար նախընտրելի ռազմավարական ուղղությունները, որը ներառում է՝ ամբողջական տեղեկատվական բազայի ձևավորումը և օբյեկտիվ տեղեկատվության ապահովումը, տնկարանային տնտեսության զարգացումը, գիտաարտադրական կենտրոնի ստեղծումը, փորձարարական տնտեսությունների հիմնումը, կոոպերացիայի զարգացման խթանումը, իրացման և արտահանման խթանումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը:

<u>Հետազոտությունների արդյունքների գործնական նշանակությունը:</u> ՀՀ և Արմավիրի մարզի պտղաբուծության ճյուղի զարգացման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կատարված և ատենախոսությունում տրված հետազոտության հիմնական արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնք կարող են հիմք հանդիսանալ հետազոտվող բնագավառում իրականացվող պետական քաղաքականության կատարելագործման, ծրագրերի մշակման, ինչպես նաև հետազոտության թեմային առնչվող գիտահետազոտական ուսումնասիրությունների համար:

<u>Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:</u> Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման և կազմակերպման ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են երեք գիտական հոդվածներում:

<u>Հետազոտության ծավալը և կառուցվածքը:</u> Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրա-

կանության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 181 էջ ներառյալ՝ օգտագործված գրականություն ցանկը, պարունակում է 25 աղյուսակ և 16 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու հիմնական արդյունքները, հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը, փորձարկումն ու հրապարակումները, հետազոտության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Պտղաբուծության նշանակությունը, դրա դերն ու առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել է պտղաբուծության դերն ու զարգացման միտումները, ՀՀ ագրարային բարեփոխումները և գյուղատնտեսության առանձնահատկությունները, ինչպես նաև Արմավիրի մարզի գյուղատնտեսության բնատնտեսական առանձնահատկությունները:

Տվյալ գլխի առաջին բաժնում ներկայացվել է պտղաբուծության ճյուղի կարևորությունը, պտուղների և հատապտուղների ձևագոյացման բուսաբանաաշխարհագրական կենտրոնները, ինչպես նաև դիտարկվել են պտղի և հատապտղի ատադրությամբ առաջատար երկրների տվյալները: Պտուղների և հատապտուղների տնկարկների հսկայական տարածքներ գտնվում են Չինաստանում, ԱՄՆ-ում, Հնդկաստանում, Բրազիլիայում, Արգենտինայում և Եվրոպական երկրներում: 1985 թվականի տվյալներով, պտղի և հատապտղի տարածքներն աշխարհում կազմել են 37.7 մլն հեկտար, իսկ 2014 թվականի տվյալներով՝ 58.6 մլն հա: Դիտարկվող տարիներին պտղի և հատապտղի արտադրությունն աշխարհում կազմել է համապատասխանաբար՝ 319 և 689.9 մլն տոննա[2]:

Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես՝ Արմավիրի մարզը, հիմնականում մասնագիտացած է ծիրանի, դեղձի և սալորի արտադրությամբ: Հաշվի առնելով այս հանգամանքը, դիտարկվել է վերոնշյալ պտղատեսակների արտադրության ծավալներն աշխարում: Աղյուսակ 1-ում ներկայացված են ծիրանի, դեղձի և սալորի համաշխարհային արտադրության վերաբերյալ տվյալներ: ՀՀ-ում արտադրված պտղի և հատապտղի կառուցվածքում զգալի տեսակարար կշիռ են կազմում նաև խնձորի և կեռասի արտադրությունները: Խնձորի համաշխարհային արտադրությունը 2014 թվականին կազմել է 84.6 մլն տոննա, իսկ նույն ժամանակահատվածում ՀՀ-ում խնձորի արտադրությունը կազմել է 132.6 հազ. տոննա: Կեռասի համաշխարհային արտադրությունը 2014 թվականին կազմել է 2.2 մլն տոննա, իսկ ՀՀ-ում արտադրվել է 9.1 հազ. տոննա[3]:

---

[2] http://www.factfish.com/catalog/crop

[3] Նույն տեղում

Աղյուսակ 1

Ծիրանի, դեղձի և սալորի համաշխարհային արտադրությունը (հազ.տոննա)[4]

Երկիր	Ծիրան			Երկիր	Դեղձ			Երկիր	Սալոր		
	1994թ.	2004թ.	2014թ.		1994թ.	2004թ.	2014թ.		1994թ.	2004թ.	2014թ.
Ուզբեկստան	55	162	547	Չինաստան	2447,6	7040,5	12452,4	Չինաստան	1935,2	4835,3	6256,9
Թուրքիա	459	350	278,2	Իսպանիա	870,6	987,6	1573,6	Ռումինիա	385,7	475,8	495,3
Իրան	170	166,4	252,7	Իտալիա	1790,4	1710	1379,4	Սերբիա	-	-	401,5
Իտալիա	179,1	213,4	222,7	Հունաստան	1174	875,5	962,6	Իրան	133	160,6	328,9
Ալժիր	42,7	88	216,9	ԱՄՆ	1358	1429,8	960	Չիլի	130	250	296,4
Հայաստան	**15,3**	**5,4**	**4,2**	Հայաստան	**11,6**	**11,4**	**74,4**	Հայաստան	**7,7**	**11**	**21,7**
Ծիրանի համաշ-խարհային արտադ-րություն Ընդամենը	2558	2852,8	3365,7	**Դեղձի համաշ-խարհային արտադ-րություն Ընդամենը**	11559,2	16774,8	22795,9	**Սալորի համաշ-խարհային արտադ-րություն Ընդամենը**	6402,4	9639,8	11282,5

[4] http://www.factfish.com/catalog/crop

Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանում գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պտղաբուծության ինտենսիվ ճանապարհով զարգացումը, դարձել է անհրաժեշտություն:

Ատենախոսության առաջին գլխի երկրորդ բաժնում ներկայացվել են ՀՀ ագրարային բարեփոխումները, գյուղատնտեսության առանձնահատկությունները, պտղի և հատապտղի ներմուծման և արտահանման վիճակագրությունը, ինչպես նաև պտղաբուծության տեղը ՀՀ բուսաբուծական ճյուղի կառուցվածքում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիտարկված ժամանակահատվածում՝ 2007-2015 թվականներին, Հայաստանում պտղի և հատապտղի ներմուծման ծավալները մշտապես գերազանցել են արտահանման ծավալները: Նշված ժամանակահատվածում առավելագույն տարբերությունը գրանցվել է 2007 թվականին՝ 15.2 անգամ, իսկ նվազագույնը 2015 թվականին՝ 1.07 անգամ:

Հայաստան Հանրապետությունում առավել զարգացած են հնդավոր և կորիզավոր պտղատեսակների արտադրությունը: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին 5 տարիների կտրվածքով պտղի և հատապտղի տարածությունների կառուցվածքում հնդավորների տեսակարար կշիռը կազմել է միջինը՝ 35.9, կորիզավորներինը՝ 51.4 %, իսկ համախառն արտադրանքի կառուցվածքում հնդավորների և կորիզավորների տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմում են՝ 43.7 և 49.5 %: Հայաստանում պտղի և հատապտղի արտադրության հիմնական կենտրոնները հանդիսանում են Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերը: Վերջիններս ապահովում են հանրապետությունում արտադրվող պտղի և հատապտղի շուրջ 70 %-ը:

Պտղաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը, այդ է վկայում նաև այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ կայուն զարգացման ռազմավարության» շրջանակներում նախատեսվում է բազմամյա տնկարկների տարածությունները հասցնել մինչև 86 հազ. հա, որից պտղատու այգի՝ 53 հազ. հա և խաղողի այգի 33 հազ. հա[5]: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում պտղի և հատապտղի զգալի տարածքներ կենտրոնացված են դիտարկվող՝ Արմավիրի մարզում: 2011 թվականին մարզում պտղի և հատապտղի տարածքները կազմել են 8216 հա, իսկ համախառն բերքը՝ 60.3 հազ.տոննա, 2013 թվականին՝ 8340 հա և 75.0 հազ. տոննա, 2015 թվականին՝ 8491 հա և 98.1 հազ.տոննա: Մարզի տեսակարար կշիռը հանրապետության համապատասխան ցուցանիշների կառուցվածքում 2011 թվականին կազմել են՝ 22.1 և 25.2 %, 2013 թվականին՝ 20.7 և 22.2 %, իսկ 2015 թվականին՝ 20.9 և 25.4 %:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում պտղաբուծության ճյուղի զարգացման գործում առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, մասնավորապես՝ բնական աղետներից պտղի և հատապտղի տընկարկների պաշտպանության անկատար մեխանիզմներ, ապահովագրության համակարգի բացակայություն, բերքահավաքի արդյունավետ կազմակերպման հիմ-

[5] «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ կայուն զարգացման ռազմավարություն», Որոշում N 1476-Ն, էջ 42

նախնդիրներ, հավաքված բերքի պահպանության, փոխադրման, իրացման հիմնախնդիրներ և այլն: Վերջիններիս լուծման համար համապատասխան վերլուծությունները և առաջարկները ներկայացվել են ատենախոսության 2-րդ և 3-րդ գլուխներում:

Տվյալ գլխի երրորդ բաժնում ներկայացվել են Արմավիրի մարզի գյուղատնտեսության բնատնտեսական առանձնահատկությունները, մարզի վերաբերյալ ամփոփ վիճակագրական տվյալները, հողային ֆոնդի կառուցվածքը, բուսաբուծական ճյուղի հիմնական արտադրական ցուցանիշները, համեմատականներ են տարվել ՀՀ-ում և դիտարկվող մարզում պտղի և հատապտղի տարածքների, համախառն արտադրանքի փոփոխությունների միջև, վերլուծվել է գյուղտեխնիկայի առկայության և սարքինության մակարդակը մարզում և հանրապետությունում:

Արմավիրի մարզը գտնվելով Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա, հանդիսանում է գյուղատնտեսական ուղղվածության մարզ, իսկ 2015 թվականին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝

1. արդյունաբերություն – 4.2 %
2. գյուղատնտեսություն – 17.5%
3. շինարարություն – 1.9%
4. մանրածախ առևտուր – 2.2%
5. ծառայություններ - 1.6 %[6]:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները դիտարկելիս նկատում ենք, որ 2015 թվականին բազմամյա տնկարկների տեսակարար կշիռը մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կառուցվածքում կազմել է ընդամենը՝ 12.4 %: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում պտղաբուծության զարգացման նպատակով կարևորվում է լուծել մի շարք հիմնախնդիրներ, կապված պտղի և հատապտղի արտադրության, պահպանության և իրացման հետ, ինչպես նաև ներդնել արդյունավետ մեխանիզմներ բնական աղետներից տնկարկների պաշտպանության համար:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «Պտղաբուծության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավորությունները ՀՀ Արմավիրի մարզում»</u> գլխում ուսումնասիրվել են պտղաբուծության զարգացման տնտեսագիտական հիմնահարցերը և առանձնահատկությունները ՀՀ Արմավիրի մարզում, ներկայացվել են պտղաբուծության արդյունավետության վրա ազդող գործոնները, էկոնոմետրիկ վերլուծության միջոցով տրվել է այդ գործոնների ազդեցության քանակական գնահատականը, բացահայտվել են Արմավիրի մարզում պտղաբուծության զարգացման հիմնախնդիրների լուծման հնարավորությունները, ինչպես նաև իրականացվել է SWOT վերլուծություն մարզում պտղաբուծության զարգացման հիմնախնդիրների լուծման նպատակով:

Երկրորդ գլխի առաջին բաժնում ներկայացվել է պտղի և հատապտղի տարածքների կառուցվածքը, համախառն արտադրանքի և միջին բերքատվության

---

[6] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, ՀՀ ԱՎԾ, 2015թ., էջ 257

վերաբերյալ տվյալներ՝ ըստ մարզի տարածաշրջանների, դասակարգվել են պտղաբուծության զարգացման հիմնահարցերը: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արմավիրի մարզը մասնագիտացած է հիմնականում կորիզավոր պտղատեսակների արտադրությամբ: Այդ են վկայում նաև 2015 թվականի տվյալները, որոնք ներկայացված են գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1:Արմավիրի մարզի պտղի և հատապտղի տարածությունների կառուցվածքը 2015 թվականի տվյալներով [7]

Գծապատկերում ներկայացված տվյալների համաձայն մարզում գերակշռում են կորիզավորների տարածքները, որոնք 2015 թվականին կազմել են մարզի պտղի և հատապտղի տարածքների 88 %-ը: Մարզում ձևավորված կորիզավորների արտադրության մասնագիտացման հիմնական պատճառներից է այդ պտղատեսակների արտադրության տնտեսական արդյունավետությունն, երբ մարզում առկա ռեսուրսային ներուժը, ինչպես նաև բարենպաստ բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս նվազագույն ծախսերով ստանալ առավելագույն արդյունք՝ համեմատած հանրապետության այլ մարզերի ու տարածաշրջանների հետ:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ բաժնում ներկայացվել են պտղաբուծության արդյունավետության վրա ազդող գործոնները և դրանց ազդեցության քանակական գնահատականը:

Նշված բաժնում նախ և առաջ ներկայացվել է «տնտեսական արդյունավետություն» կատեգորիայի բնորոշումները, իրականացվել են պտղաբուծության արդյունավետությունը պայմանավորող գործոնների դասակարգում, ինչպես նաև կատարվել են էկոնոմետրիկ վերլուծություններ, որի արդյունքում կառուցված ռեգրեսիոն մոդելի միջոցով բացահայտվել է որոշակի խումբ գործոնների փոփոխության դեպքում մարզում արտադրված պտղի և հատապտղի համախառն արտադրանքի արժեքի փոփոխության չափը: Էկոնոմետրիկ վերլուծությունների

[7] Գծապատկերը կազմվել է ատենախոսի կողմից

համար որպես կախյալ փոփոխական ընդունվել է մարզում արտադրված պտղի և հատապտղի համախառն արտադրանքի արժեքը: Ռեգրեսիոն մոդելի կառուցման նպատակով դիտարկվել են 15, սակայն մոդելի մեջ ներառվել են 5 անկախ փոփոխականներ՝ X_6 (Արմավիրի մարզում պտղատու հասակի պտղի և հատապտղի տարածությունները՝ հազ. հա), X_7 (Արմավիրի մարզում պտղի և հատապտղի 1 հեկտարի միջին բերքատվությունը՝ g/հա), X_9 (ՀՀ Արմավիրի մարզում պտղի և հատապըտղի ապրանքայնության մակարդակը՝ %), X_{13} (ՀՀ-ում աղքատության մակարդակը՝ %) և X_{15} (ՀՀ առևտրային բանկերի կողմից վարկավորման ծավալները՝ մլն դրամ): Մեր կողմից իրականացված էկոնոմետրիկ վերլուծությունների արդյունքում կառուցված ռեգրեսիոն մոդելն ունի հետևյալ տեսքը՝

$$Y= -15251,7+1338,5X_6+24,2X_7+300,8X_9-255,4X_{13}+6,6X_{15}$$

Ռեգրեսիոն մոդելի նշանակելիության ստուգման համար օգտվել ենք Ֆիշեր-Սնեդեկորի F չափանիշից, որի կրիտիկական արժեքը որոշվում է α նշանակալիության մակարդակի և $k_1=m$ և $k_2=n-m-1$ ազատության աստիճանների միջոցով: Մեր կողմից իրականացված ռեգրեսիոն վերլուծության մեջ α=0.05 նշանակալիության մակարդակի և $k_1=5$ և $k_2=10$ ազատության աստիճանների դեպքում $F_{crit}=3.33$[8]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեգրեսիոն մոդելի նշանակալիությունը որոշվում է համաձայն $F>F_{crit}$ պայմանի, ապա մեր կողմից կառուցված ռեգրեսիոն մոդելը համարվում է նշանակալի ($F=14,571>F_{crit}=3.33$):

Կառուցված ռեգրեսիոն մոդելի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզու պտղատու հասակի պտղի և հատապտղի տարածությունները 1000 հեկտարով ավելացնելու դեպքում (մնացած հավասար պայմաններում), մարզում պտղի և հատապտղի համախառն արտադրանքի արժեքը կավելանա 1338,5 մլն դրամով, բերքատվության 1 g/հա-ով ավելացումը կբերի մարզում համախառն արտադրանքի արժեքի ավելացման՝ 24,2 մլն դրամով: Մարզում պտղի և հատապտղի համախառն արտադրանքի արժեքը ավելանում է նաև ապրանքայնության մակարդակի աճի և ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված գյուղատնտեսության վարկավորման ծավալների ավելացման արդյունքում: Մարզում ապրանքայնության մակարդակի 1 %-ով և գյուղատնտեսության վարկավորման ծավալները 1 մլրդ դրամով ավելացնելու դեպքում համախառն արտադրանքի արժեքը ավելանում է համապատասխանաբար՝ 300,8 և 6,6 մլն դրամով: Ռեգրեսիոն հավասարումը ցույց է տալիս, որ ՀՀ-ում աղքատության մակարդակի և մարզում պտղի և հատապըտղի համախառն արտադրանքի արժեքների միջև գոյություն ունի հակադարձ կապ: Աղքատության մակարդակի 1 %-ով ավելացումը հանգեցնում է մարզում պտղի և հատապտղի համախառն արտադրանքի արժեքի նվազեցմանը՝ 255,4 մլն դրամով: Նշենք նաև, որ դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս, որ ՀՀ Արմավիրի մարզում պտղի և հատապտղի համախառն արտադրանքի արժեքը 87,9 %-ով պայմանավորված է մեր կողմից դիտարկված անկախ փոփոխականներով, իսկ մնացած 12,1 %-ը՝ այլ և պատահական գործոններով:

---

[8] Լ. Ղուշչյան, Տ. Թերզյան, Լ. Դավթյան Տարրական էկոնոմետրիկա, Երևան, Զեսթ 2002 , էջ 272 (279 էջ)

Տվյալ գլխի երրորդ բաժնում ներկայացվել են պտղաբուծության զարգացման հիմնախնդիրների լուծման հնարավորությունները: Կատարվել է դիտարկվող մարզում 1 հա կորիզավոր պտղատեսակների արտադրության արդյունավետության հաշվարկ, ինչպես նաև ճյուղի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման նպատակով իրականացվել է SWOT վերլուծություն:

Աղյուսակ 2-ում ներկայացված են մարզում 1 հա բերքատու կորիզավոր պտղատեսակների արտադրության արդյունավետության հաշվարկներ:

Աղյուսակ 2

ՀՀ Արմավիրի մարզի 1 հա-ի վրա մշակվող, բերքատու տարիքի հիմնական կորիզավոր պտղատեսակների արտադրության ծախսերը և արդյունավետության ցուցանիշները

Ցուցանիշներ	Չափի միավոր	Ծիրան	Դեղձ	Սալոր	Կեռաս
Հողի հարկ	Հազ.դրամ	17,5	17,5	17,5	17,5
Ոռոգման ջրի վարձավճար	Հազ.դրամ	79,5	79,5	79,5	79,5
Պարարտացում	Հազ.դրամ	70,2	74,6	68,4	54
Հիվանդությունների և վնասատուների դեմ պայքար	Հազ.դրամ	101,7	90,8	87,8	83,5
Սեփական և վարձու աշխատողների համար հաշվարկված աշխատավարձ	Հազ.դրամ	740	620	580	630
Մեքենատրանսպորտային ծախսեր	Հազ.դրամ	85	70	75	80
Իրացման ծախսեր	Հազ.դրամ	120	100	90	85
Այլ ծախսեր	Հազ.դրամ	40	40	40	40
Ընդամենը ծախսեր	Հազ.դրամ	1253,9	1092,4	1038,2	1069.5
1 հեկտարի բերքատվությունը	ցենտներ	97	95	110	75
1 ցենտների լրիվ ինքնարժեքը	Հազ.դրամ	12,9	11,5	9.4	14.3
1 ցենտների միջին գինը	Հազ.դրամ	30,5	19,5	15,4	26,7
1 հեկտարի հաշվով Զուտ եկամուտը	Հազ.դրամ	1707,2	760	660	930
Եկամտաբերության մակարդակը	%	136,2	69,6	63,6	87,0

Աղյուսակում ներկայացված ցուցանիշների համար հիմք են ընդունվել բարենպաստ եղանակային պայմաններով տարիների միջինացված ցուցանիշները: Նշենք նաև, որ ծիրանենին բերքատվության է անցնում այգու հիմնումից 7 տարի անց, իսկ այդ ընթացքում կատարվող ծախսերը կազմում են շուրջ 1,8 մլն դրամ: Դեղձի, սալորի և կեռասի դեպքում բերքատու տարիքը հանդիսանում է այգու հիմնման 4-րդ տարին, իսկ այդ ընթացքում կատարվող ծախսերը հասնում են 0,9 – 1,1 մլն դրամի:

Այս բաժնում իրականացված վերլուծությունները հնարավորություն են տվել մշակելու պտղաբուծության զարգացման հստակ ռազմավարություն, որը հիմնված է ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ արտադրության արդյունավետության բարձրացման վրա:

<u>Ատենախոսության երրորդ՝ «Պտղաբուծության զարգացման հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները ՀՀ Արմավիրի մարզում»</u> գլխում ներկայացվել են պտղի և հատապտղի տնկարկները բնական աղետներից պաշտպանության ենթակառուցվածքների ներկա վիճակը, գնահատվել են գործող ենթակառուցվածքների արդյունավետությունը, ուսումնասիրվել է միջազգային փորձը, մշակվել են իրացման համակարգի բարելավման ուղիներ, ինչպես նաև գնահատվել է առաջարկվող միջոցառումների տնտեսական արդյունավետությունը և ներկայացվել պտղաբուծության զարգացման ռազմավարական ուղղությունները:

Աշխատանքի եզրափակիչ գլխի առաջին բաժնում ներկայացվել են ՀՀ-ում, մասնավորապես՝ Արմավիրի մարզում, բնական աղետների պատճառած վնասների վերաբերյալ տվյալներ, գնահատվել է դրանց դեմ պայքարի առկա ենթակառուցվածքների արդյունավետությունը, ներկայացվել է բնական աղետների դեմ պայքարի միջազգային փորձը, ինչպես նաև կատարվել են մի շարք ուսումնասիրություններ՝ հաշվի առնելով միջազգային փորձը, ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրման նպատակով:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պտղի և հատապտղի տնկարկները կարկտահարություններից պաշտպանելու ամենաարդյունավետ միջոցը հակակարկտային ցանցերի կիրառությունն է, որը հնարավորություն է տալիս բազմամյա տնկարկների տարածքները 100%-ով ապահովել կարկուտից: Որպես ցրտահարությունների դեմ պայքարի արդյունավետ միջոց է առաջարկվել հայկական «Բարվա» ինովացիոն կենտրոնի նորարական տեխնոլոգիաների կիրառման հիման վրա մշակված և արտադրված «ԱնտիՖրոստ» (AntiFrost) սարքավորումը: Այս բաժնում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1 հա պտղատու այգին հակակարտային ցանցերով ապահովելու և ցրտահարությունների դեմ պայքարի առաջարկվող միջոցի կիրառման համար անհրաժեշտ է շուրջ 10 մլն դրամ կապիտալ ներդրումների իրականացում:

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ բաժնում մշակվել են իրացման համակարգի բարելավման ուղիներ: Վերջինիս իրականացման նպատակով կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որի արդյունքում բացահայտվել են պտղի և հատապտղի իրացման հետ կապված հիմնախնդիրներ, մասնավորապես՝ հարևան երկրների կողմից արտաքին շուկաներին կապող ուղիների շրջափակում, հումք վերամշակող կազմակերպությունների հետ պայմանագրային հիմունքների

գրեթե բացակայություն, մթերման կազմակերպման անկատարություն, մարզում սպառողական և արտադրական կոոպերատիվների ձևավորման բարդություններ, գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրային գործունեությամբ զբաղվող տնտեսավարողների սակավություն, գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գների և մանրածախ գների մեծ տարբերություն և այլն: Գծապատկեր 2-ում ներկայացված են 2006-2015 թվականներին գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված խնձորի միջին գների և խնձորի մանրածախ վաճառքի միջին գների վերաբերյալ տվյալներ:



Գծապատկեր 2:2006-2015 թվականներին գյուղացիական տնտեսությունների կողմից վաճառված և մանրածախ վաճառքի միջոցով ձևավորված խնձորի միջին գները[9]

Գծապատկերում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ մանրածախ վաճառքի գները շատ հաճախ մի քանի անգամ գերազանցում են գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված միջին շուկայական գներին: Այդ տարբերությունը առավել ակնհայտ է 2011 թվականին, երբ մանրածախ գները 3,4 անգամ գերազանցել են գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գները: Արմավիրի մարզում պտղի և հատապտղի իրացման հիմնախնդրի լուծման համար, նպատակահարմար է նախ և առաջ հանդես գալու գյուղատնտեսական կոոպերատիվների ձևով կամ տարածաշրջանային հավաքման կետերին բերքը վաճառելու միջոցով:

Գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով իրացման կազմակերպման առաջարկվող գործընթացը ներկայացված է գծապատկերի միջոցով:

[9] Պարենային ապահովություն և աղքատություն, 2006-2015թթ., ՀՀ ԱՎԾ, Երևան 2010թ. և 2016 թ. էջ 31-35



Գծապատկեր 3:Պտղի և հատապտղի իրացման կազմակերպումը գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով

Արմավիրի մարզում պտղի և հատապտղի իրացման հետ կապված խնդիրների գնահատմամբ, ինչպես նաև միջազգային փորձից ելնելով կարող ենք փաստել, որ մարզում պտղի և հատապտղի իրացման հիմնահարցի լուծման գործում որպես կարևոր միջոց կարող են հանդես գալ գյուղատնտեսական կոոպերատիվները, տարածաշրջանային հավաքման կետերը և գյուղատնտեսական մեծածախ շուկաները: Այս տեսակետից ելնելով, կարծում ենք, որ պետությունը կարող է կարևոր և անփոխարինելի դեր ունենալ մեծածախ շուկաների կազմակերպման, գյուղատնտեսական կոոպերատիվերի ձևավորման և դրանց թվաքանակի ավելացման գործում, ինչը հնարավորություն կտա լուծելու գյուղացիական տնտեսությունների և այլ տնտեսավարող սուբյեկտների առջև ծառացած իրացման հետ կապված խնդիրները և պայմանագրային հիմունքներով իրականացնել պտղի և հատապտղի իրացում՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ բաժնում՝ ելնելով մարզում կորիզավոր պտղատեսակներից հատկապես ծիրանի արտադրության մասնագիտացումից, առաջարկվել է ներդնել ցածրաճ ծիրանենու տեսակներ, կատարվել է առաջարկվող ծիրանենու տեսակի 1 հա այգու հիմնումից սկսած 15 տարի ժամկետով ակնկալվող ծախսերի և եկամուտների հաշվարկ, գնահատվել է այգում նախատեսված կապիտալ ներդրումների արդյունավետությունը, ինչպես նաև մշակվել է որոշակի ռազմավարություն՝ ուղղված մարզում պտղաբուծության ճյուղի զարգացմանը: Աղյուսակ 3-ում ներկայացված է 1 հա ծիրանի այգու հիմնումից սկսած սպասվելիք կանխիկ դրամական հոսքերը՝ 15 տարի ժամանակահատվածով:

Աղյուսակ 3

ՀՀ Արմավիրի մարզում 1 հեկտար ծիրանի այգու մշակության ընթացքում սպասվելիք կանխիկ դրամական հոսքերը (հազ.դրամ)[10]

Անվանում/ տարիներ	**2017**	**2018**	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**	**2025**	**2026**	**2027**	**2028**	**2029**	**2030**	**2031**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**	**16**
Սկզբնական մնացորդ մլն դրամ	**0.1**	**0.24**	**0.07**	**0.11**	**0.03**	**2.5**	**4.9**	**7.7**	**11.3**	**14.9**	**19.7**	**25.4**	**30.5**	**34.8**	**38.4**
Մուտքեր	**1500**	**800**	**1100**	**1230**	**6130**	**1593.2**	**6932**	**7737**	**7737**	**7737**	**7737**	**6932**	**6130**	**5324**	**5324**
Մուտքեր արտադ-րանքի վաճառքից	0	0	0	330	5630	6432	7237	7237	7237	7237	7237	6432	5630	4824	4824
Այլ գործու-նեությունից ստացված մուտքեր	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500
Վարկեր	1000	300	600	400	0	9000	0	0	0	0	0	0	0	0	0
Ելքեր	1375,3	976,1	1081	1322,6	3678,2	13488,4	4162,9	4161,7	4096,4	3020,9	1983,1	1844,3	1832	1743,9	1735,2
Տնկանյութ	832,5	64,5	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Պարարտա-նյութ	78	98,8	143,6	147,5	155	159,4	161,5	163,3	164,2	165	164,5	151,5	175,6	178,9	181,5
Բուժանյութ	52,3	81,7	122,8	123,1	134,6	355,4	356,8	356,9	358,5	355,6	361,8	361,5	361,8	364,7	368,5

[10] Հեղինակի անձնական հաշվարկներ

Աղյուսակ 3-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Գյուղ. գործիքներ	31,4	32,6	35,8	39,5	39	43,4	48,9	51,2	52,5	53	51,5	48,7	51,8	53,6	50
Աշխա-տանքի վարձատ-րություն	150,5	447	498	545	682	695	728	749	751,5	753	751,5	695,9	698	649,7	645,5
Մեքե-նատրան-սպորտային ծախսեր	83,6	102,5	111,8	125	135,6	138,7	144,2	148,8	151,5	152,6	153,8	144,8	146,7	144,5	141,3
Իրացման ծախսեր	0	0	0	53,5	147	249,5	346,5	395,5	401,2	404,7	403	344,9	301,1	255,5	251,4
Հողի հարկ	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5
Ոռոգման ջրի վարձ	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5
Վարկերի մարումներ	50	52	72	192	2288	2450	2280	2200	2120	1040	0	0	0	0	0
Բնական աղետների դեմ պայքարի նպատակով կապիտալ ներդրումներ	0	0	0	0	0	9300	0	0	0	0	0	0	0	0	0

Այգու հիմնադրման և բնական աղետների դեմ պայքարի ենթակառուցվածքների ձեռքբերման համար անհրաժեշտ են շուրջ 10 մլն դրամ կապիտալ ներդրումներ: Մեր կողմից իրականացված հաշվարկների ընթացքում, որպես կապիտալ ներդրումների ստացման աղբյուր հիմք ենք ընդունել ՀՀ Կառավարության առընթեր «Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման» ԾԻԳ-ի (Ծրագրերի իրականացման գրասենյակ) «Գյուղական ֆինանսավորման (այգեգործական վարկեր)» բաղադրիչի շրջանակներում առաջարկվող վարկատեսակները:

Համաշխարհային պրակտիկայում կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատման համար լայն տարածում են ստացել մի շարք չափանիշներ, որոնցից մեկը զուտ դիսկոնտավորված արժեքն է (Net present value, NPV):

Տնտեսագետներ Ի. Վ. Սերգեևը, Ի. Ի. Վերետեննիկովան վերլուծելով տարբեր գիտնականների գիտական աշխատությունները, եկել են այն եզրակացության, որ ինվեստիցիաների տնտեսական հիմնավորման առավել տարածված մեթոդը զուտ դիսկոնտավորված արժեքի (ԶԴԱ) և իրական ինվեստիցիաների (Կ) համեմատման վրա հիմնված մեթոդն է, այսինքն այս դեպքում ինվեստիցիաների տնտեսական հիմնավորման չափանիշ է ծառայում ԶԴԱ-ն:

Եթե՝

ԶԴԱ>Կ>0- ապա նախագիծը պետք է ընդունել,

ԶԴԱ=Կ=0- նախագիծը ոչ շահութաբեր է և ոչ էլ վնասաբեր,

ԶԴԱ<Կ<0- նախագիծը պետք է մերժել:

Կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատման նպատակով, արդյունքում դիտարկված տարբեր մոտեցումներից առավել նպատակահարմար ենք համարել կապիտալ ներդրումների արդյունավետությունը հաշվարկել հետևյալ բանաձևով՝[11]

$$\text{ԶԴԱ} = \text{ԶՇ}_1/(1+\text{Դ}_\text{ն})+ \text{ԶՇ}_2/(1+\text{Դ}_\text{ն})^2+ \text{ԶՇ}_3/(1+\text{Դ}_\text{ն})^3+\ldots+ \text{ԶՇ}_\text{n}/(1+\text{Դ}_\text{ն})^\text{n} - \text{Կ}$$

Որտեղ՝

Կ-ն՝ նախագծի իրացման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումներն են,

ԶՇ_1- ԶՇ_n-ն՝ նախագծի իրացումից ըստ տարիների ստացած շահույթն է,

$\text{Դ}_\text{ն}$-ն՝ դիսկոնտի նորման է:

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալների հիման վրա իրականացրել ենք կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկ՝ 12% դիսկոնտավորման նորմայի պայմաններում: Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ հակակարկտային ցանցերով այգու արդիականացման և ցրտահարությունների դեմ պայքարի սարքավորումների ձեռքբերման համար կապիտալ ներդրումները իրականացվել են այգու հիմնման 6-րդ տարում: Կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկի վերաբերյալ ելակետային տվյալները ներկայացված են աղյուսակ 4-ում:

---

[11] Ե. Պարսեղյան, Իրական ինվեստիցիաների (կապիտալ ներդրումների) արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգը, Եր.:, Տնտեսագետ 2003. էջ 22

Աղյուսակ 4

1 հեկտար ծիրանի այգու կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկի համար ելակետային տվյալներ

Ցուցա-նիշներ	Տարիներ									
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Զուտ շահույթ/վնաս (մլն դրամ)	**(7,1)**	**2,3**	**3,1**	**3,1**	**4,2**	**5.3**	**4.6**	**3.8**	**3.1**	**3.1**
$(1+Դ_{ն})^{n}$	**1,12**	**1,25**	**1,4**	**1,57**	**1,76**	**1,97**	**2,21**	**2,48**	**2,77**	**3,1**

Ներկայացված տվյալների համաձայն՝

ԶԴԱ=1.2 մլն դրամ:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս որ ԶԴԱ>0, այսինքն կապիտալ ներդրումները հանդիսանում են արդյունավետ և կարող են գործնական կիրառություն ստանալ:

Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալների միջոցով իրականացվել է ծիրանի այգու հիմնման 6-րդ և հիմնական կապիտալ ներդրումների՝ հակակարկտային ցանցերով արդիականացման և ցրտահարությունների դեմ պայքարի սարքավորումների ձեռքբերման առաջին տարվանից սկսած, ստացված զուտ շահույթի միջոցով արդյունավետության հաշվարկ: Մյուս կողմից, զուտ դիսկոնտավորված եկամուտը կարելի է հաշվարկել նաև ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ստացված եկամուտների և ծախսերի տարբերությամբ:

Աղյուսակ 5-ում ներկայացված է ծիրանի այգու հիմնադրումից սկսած զուտ դիսկոնտավորված եկամտի հաշվարկ՝ 12 % դիսկոնտավորման նորմայի պայմաններում:

Աղյուսակում ներկայացված տվյալների համաձայն զուտ դիսկոնտավորված եկամուտը կազմել է 3,7 մլն դրամ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ծիրանենու այգու հիմնադրումը և առաջարկված կապիտալ ներդրումների իրականացումը նույնպես համարվում է արդյունավետ:

Ատենախոսության շրջանակներում իրականացվել է նաև կապիտալ ներդրումների ետգնման ժամկետի հաշվարկ, որը ըստ ներկայացված տվյալների կազմել է 3.6 տարի:

Այսպիսով, կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ մարզում 1 հա ծիրանի այգին հակակարկտային ցանցերով ապահովելու և ցրտահարությունների դեմ պայքարի սարքավորման կիրառման դեպքում կերաշխավորվի տնտեսավարող սուբյեկտների կայուն եկամուտների ստացումը և մարզում պտղաբուծության ճյուղի զարգացումը:

Աղյուսակ 5

ՀՀ Արմավիրի մարզում 1 հեկտար ծիրանի այգու մշակության ընթացքում զուտ դիսկոնտավորված եկամտի հաշվարկ

Անվանում	Տարիներ															Ընդամենը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
Դիսկոնտա-վորման գործակից	0,89	0,8	0,71	0,64	0,57	0,51	0,45	0,40	0,36	0,32	0,29	0,26	0,23	0,2	0,18	-
Հասույթ (մլն դրամ)	0	0	0	0,33	5,63	6,43	6,43	7,23	7,23	7,23	7,23	6,43	5,63	4,82	4,82	69,4
Ծախս (մլն դրամ)	1,37	0,97	1,08	1,32	3,67	13,49	4,16	4,16	4,09	3,02	1,98	1,84	1,83	1,74	1,73	46,5
Դիսկոնտա-վորված հասույթ (մլն դրամ)	0	0	0	0,21	3,19	3,26	2,91	2,92	2,61	2,33	2,08	1,65	1,29	0,99	0,88	24,3
Դիսկոնտա-վորված ծախս (մլն դրամ)	1,2	0,77	0,76	0,77	2,08	6,83	1,88	1,68	1,47	0,97	0,57	0,47	0,42	0,36	0,32	20,6
Զուտ դիսկոնտա-վորված եկամուտ (Net present value) (մլն դրամ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	**3,7**

Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների և սեփական այլ դիտարկումների արդյունքում մշակվել են մարզում պտղաբուծության զարգացման համար նախընտրելի ռազմավարական ուղղությունները, որը ներառում է ամբողջական տեղեկատվական բազայի ձևավորումը և օբյեկտիվ տեղեկատվության ապահովումը, տնկարանային տնտեսության զարգացումը, գիտաարտադրական կենտրոնի ստեղծումը, փորձարարական տնտեսությունների հիմնումը, կոոպերացիայի զարգացման խթանումը, իրացման և արտահանման խթանումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պտղի և հատապտղի արտադրության համատեքստում պտղաբուծության ճյուղի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների առաջադրման ուղղությամբ իրականացված հետազոտությունների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Արմավիրի մարզը հանդիսանում է ՀՀ պտղի և հատապտղի համախառն արտադրանքն ապահովող հիմնական գոտիներից մեկը: 2015 թվականի տվյալներով մարզում գտնվում են հանրապետության պտղի և հատապտղի տարածությունների 20.9 %-ը՝ 8491 հա, որտեղից ստացվել է 98.1 հազ.տոննա պտուղ և հատապտուղ, որի տեսակարար կշիռը հանրապտությունում արտադրված պտղի և հատապտղի համախառն արտադրանքի կառուցվածքում կազմել 25.4 %:

2.2015 թվականի տվյալներով հանրապետությունում պտղի և հատապտղի ինքնաբավության մակարդակը կազմել է 96.1 %: Չնայած ինքնաբավության բարձր մակարդակին, այնուամենայնիվ պտղի և հատապտղի ներմուծման ծավալները մի քանի անգամ գերազանցում են արտահանման ծավալները:

3.Արմավիրի մարզում տնտեսավարող սուբյեկտները մասնագիտացած են առավելապես հնդավոր և կորիզավոր պտղատեսակների արտադրությամբ: Վերջին 10 տարիների տվյալներով նկատելի է հատկապես կորիզավոր պտղատեսակների տարածությունների աճման միտումը: 2006 թվականին հնդավորների տարածությունները կազմել է 734 հեկտար, այնուհետև նվազելով շուրջ 15 տոկոսով, 2015 թվականին կազմել է 624 հեկտար: Ի տարբերություն հնդավորների, կորիզավորների տարածությունները աճել են և 2015 թվականին կազմել է 7504 հեկտար: 2006 թվականի հետ համեմատած աճը կազմել է 8,1 %:

3. Հողի սեփականաշնորհման հետևանքով պտղատու այգիները մասնատվել են և տրվել այգեգործությամբ զբաղվող շուրջ 112 հազար գյուղացիական տնտեսությունների, որտեղ բազմամյա տնկարկների բաժինը 0.17-0.26 հեկտար է: Աշխատանքները գերազանցապես կատարվում է ձեռքով: Պտղաբուծության ճյուղը, ի տարբերություն գյուղատնտեսության մյուս ճյուղերի, առանձնանում է արտադրության աշխատատարությամբ: 1 հա պտղի և հատապտղի տնկարկների աշխատանքային ծախսը կազմում է շուրջ 700 մարդ-ժամ, ինչը շուրջ 40 անգամ ավելին է հացահատիկային մշակաբույսերի արտադրության համար պահանջվող աշխատանքային ծախսերից: Այս ցուցանիշը հիմնականում պայմանավորված է ճյուղի մեքենայացման ցածր մակարդակով (20-25%):

4. Կառուցված ռեգրեսիոն մոդելի համաձայն մարզում պտղի և հատապտղի համախառն արժեքի փոփոխությունը 87.9 %-ով պայմանավորված է

ռեգրեսիոն մոդելում ներառված անկախ փոփոխականների (մարզում պտղի և հատապտղի բերքատու տարածություններ, միջին բերքատվություն, մարզում պտղի և հատապտղի ապրանքայնության մակարդակ, ՀՀ-ում աղքատության մակարդակ, ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալներ) արժեքներով:

5. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է կարկտահարությունների դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցի՝ հակակարկտային ցանցերի կիրառման նպատակահարմարությունը: Չնայած հակակարկտային ցանցերով այգիների արդիականացման համար անհրաժեշտ մեծ կապիտալ ներդրումներ (1 հա-ի հաշվով շուրջ 7,5 մլն դրամ), դրանք օգտագործվում են 8-10 տարի ժամկետով և ապահովում են պտղատու այգիների 100% պաշտպանություն կարկտահարություններից:

6. Վաղ գարնանային ցրտահարությունների պատճառած վնասը նվազագույնի հասցնելու նպատակով կարևորվում է պետություն-մասնավոր հատված կապի ամրապնդումը: Կատարված բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում, տվյալ խնդրի լուծման նպատակով, առաջարկվել է կիրառել հայկական «Բավրա» ինովացիոն կենտրոնում արտադրվող ցրտահարությունների դեմ պայքարի կցասայլեր:

7.Գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական ապահովագրության ձևերի և մեթոդների բազմազանությունը պայմանավորված է տվյալ երկրի գյուղատնտեսության վարման ռիսկայնությամբ, ոլորտի առանձնահատկություններով և տնտեսության կառուցվածքում դրա նշանակությամբ, երկրի տնտեսական հնարավորություններով, ապահովագրության բնագավառում ձևավորված ավանդույթներով, ապահովագրական մարքեթինգի արդյունավետությամբ և մի շարք այլ գործոններով: Միջազգային փորձի տեղայնացումը ամենից առաջ պահանջում է, հանրապետությունում առկա ռիսկերի գնահատում, ռիսկերի արդյունավետ կառավարման ուղղությամբ խոչընդոտող գործոնների բացահայտում, գյուղատնտեսական ապահովագրությունում հստակ քաղաքականության մշակում և իրականացում՝ ելնելով ընձեռնված ռեսուրսային հնարավորություններից:

8. Կատարված հաշվարկների արդյունքներով ինտենսիվ տեխնոլոգիաների (հակակարկտային ցանցերով այգու արդիականցում, ցրտահարությունների դեմ պայքարի միջոցների ձեռքբերում և այլն) ներդրման արդյունավետության գնահատման հաշվարկները ցույց են տալիս, որ 1 հա պտղատու ծիրանի այգու համար պահանջվող շուրջ 9,5 մլն դրամ կապիտալ ներդրումների արդյունավետությունը տեսականորեն ապացուցվել է, իսկ վերջինիս հետգնման ժամկետը կազմել է շուրջ 3,6 տարի:

9. Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 1 հա ծիրանի այգու հիմնադրումից սկսած զուտ դիսկոնտավորված եկամուտը (NPV)՝ 12 % դիսկոնտավորման նորմայի պայմաններում կազմում է 3,7 մլն դրամ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ծիրանենու այգու հիմնադրումը և առաջարկված կապիտալ ներդրումների իրականացումը համարվում է արդյունավետ:

10. Ատենախոսության շրջանակներում իրականացված սեփական դիտարկումների, վերլուծությունների, հաշվարկների, ինչպես նաև պտղաբուծու-

թյան զարգացման հետ կապված միջազգային փորձի ուսումնասիրությունների արդյունքում մշակվել է ՀՀ Արմավիրի մարզում պտղաբուծության զարգացման հիմնահարցերի լուծման ռազմավարական ուղղություններ, որոնք առաջարկվում է իրականացնել հետևյալ փուլերով՝ Արմավիրի մարզի բոլոր համայնքների տնտեսավարող սուբյեկտների շրջանում հարցումների կազմակերպում, ճյուղի վերաբերյալ ամբողջական, օբյեկտիվ տեղեկատվության ձեռքբերում, ստացված տվյալների ամփոփում և տեղեկատվական բազայի ստեղծում, տնկարանային տնտեսությունների թվաքանակի ավելացում, գիտաարտադրական կենտրոնի ստեղծում, պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ 5 փորձարարական տնտեսությունների հիմնում, կոոպերատիվների թվաքանակի ավելացման և զարգացման խթանում, պետության կողմից երաշխավորված գների սահմանում և այդ գներին համապատասխան իրացման կազմակերպում, արտահանման խթանում, օրենսդրական դաշտի կատարելագործում:

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մուրադյան Շ. Շ. ՀՀ-ում պտղաբուծության վիճակը և ճյուղի զարգացման գործում ապահովագրական համակարգի անհրաժեշտությունն ու ներդրման մոտեցումները//: Ֆինանսներ և էկոնոմիկա 7-8, 2015.- էջ 118-121
2. Մուրադյան Շ. Շ. Կարկտահարությունից պտղի և հատապտղի տնկարկների պաշտպանության տնտեսական հիմնախնդիրները Հայաստանում// Материалы международной научной конференции, посвященной 85-летию, Национального аграрного университета Армении, 2016.- с.177-181
3. Հ. Ս. Ծպնեցյան, Շ. Շ. Մուրադյան ՀՀ Արմավիրի մարզի պտղաբուծության արտադրանքի արժեքը պայմանավորող գործոնները և դրանց ազդեցության էկոնոմետրիկ վերլուծությունը// Ֆինանսներ և էկոնոմիկա 3-4, 2017.- էջ 70-72

МУРАДЯН ШИРАЗ ШАГЕНОВИЧ

ЭКОНОМИЧЕСКИЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ ПЛОДОВОДСТВА И ПУТИ ИХ РЕШЕНИЯ (НА ПРИМЕРЕ АРМАВИРСКОГО МАРЗА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Автореферат дисертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика и управление хозяйством, его сферами»

Публичная защита диссертации состоится 18-го июля 2017 года в 12^{00} часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74.

РЕЗЮМЕ

Работа посвящена развитию плодоводства в Армавирском марзе Республики Армения, повышению эффективности производства плодов и ягод путем выявления и решения существующих в отрасли проблем.

Проведенные исследования показывают, что в рассматриваемом марзе рост производства плодово-ягодной продукции происходит в основном экстенсивным путем, поэтому выявление и решение существующих проблем, а также развитие производства плодов и ягод по интенсивной технологии позволит максимально использовать ресурсный потенциал и повысить эффективность отрасли.

Основной целью исследования является анализ современного состояния плодоводства в Армавирском марзе Республики Армения, выявление экономических проблем и поиск путей их решения. Для реализации поставленных задач был обозначен широкий круг проблем: анализ природно-климатических и хозяйственных особенностей марза в контексте реформ, необходимых для повышения эффективности этой важнейшей для экономики Армении отрасли, количественная оценка факторов, влияющих на ее развитие, варианты решения существующих проблем, эффективность способов борьбы со стихийными бедствиями, пути улучшения системы реализации плодов и ягод, экономическая оценка эффективности стратегии развития плодоводства в Армавирском марзе.

Научная новизна диссертации обусловлена решением задач, выдвинутых в рамках исследования. В частности:

- была проведена оценка значимости факторов, обусловливающих эффективность производства плодов и ягод в Армавирском марзе Республики Армения;
- в результате эконометрического анализа выявлена степень влияния различных факторов (продуктивная площадь, средняя урожайность, уровень товарности, уровень бедности в РА, объем сельскохозяйственного кредитования со стороны коммерческих банков РА) на стоимость валового производства плодов и ягод в Армавирском марзе РА;
- указаны основные направления совершенствования системы реализации плодов и ягод;

- дана оценка эффективности инфраструктуры во время стихийных бедствий;
- разработаны приоритетные направления стратегии развития плодоводства, которая включает формирование единой информационной базы и предоставление объективных данных, развитие питомнического хозяйства, создание научно-производственного центра, разбивка опытных участков, стимулирование развития кооперации, а также реализации и экспорта продукции, совершенствование законодательства.

В первой главе диссертации представлены значение плодоводства и тенденции его развития, особенности сельского хозяйства в РА, суть аграрных реформ, а также оценка эколого-хозяйственного состояния сельского хозяйства Армавирского марза.

Во второй главе диссертации исследованы экономические проблемы и особенности развития плодоводства в Армавирском марзе РА, представлены факторы, от которых зависит эффективность отрасли, на основе эконометрического анализа дана количественная оценка их влияния, выявлены возможности решения возникающих задач. Одновременно проведен SWOT-анализ, позволяющий решить существующие проблемы.

В третьей главе диссертации представлено современное состояние инфраструктур во время стихийных бедствий, дана оценка их эффективности. Одновременно проанализирован международный опыт, предложены пути оптимизации системы сбыта урожая плодов и ягод, рассчитана экономическая эффективность предлагаемых мероприятий, указаны стратегические направления развития плодоводства.

Представленные в диссертационной работе результаты исследований по проблемам развития плодоводства имеют теоретическое и практическое значение. Они могут быть использованы в целях совершенствования государственной политики в исследуемой области, при разработке программ развития плодоводства, а также стать дополнительным источником информации при проведении научных исследований.

MURADYAN SHIRAZ

ECONOMIC ISSUES OF HORTICULTURE DEVELOPMENT AND THE WAYS OF THEIR SOLUTION (UPON THE EXAMPLE OF ARMAVIR REGION OF RA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of economics in the speciality 08.00.02 – «Economics and Management of Economy and its Spheres»

The defense of the thesis will take place on 18 July 2017, at 12.00 o'clock at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan, 0009

SUMMARY

The current work is devoted to the development of horticulture at Armavir region of RA, as well as to the efficiency enhancement of fruit and berry production through the disclosure and handling of the issues peculiar to that area.

The conducted investigations show that in the region where investigations are carried out, the growth of horticultural product takes place mainly in an extensive way, so the enhancement and overcoming of the current issues, as well as the development of fruit and berry production in an extensive way will enable to maximally use the available resources in the region increasing the efficiency of the given sector.

The main aim of the investigation is to study the current situation of horticulture at RA Armavir region, to disclose the economic issues and to propose some methods, initiatives and measures for their solution.

In order to achieve the mentioned goal the author of the thesis has proposed a broad range of objectives: analyses of natural-climatic and farming characteristics of the region in the agrarian reform context necessary for the efficiency increase of one of the most important branch for the Armenian economy, qualitative evaluation of the factors affecting its development, the options of solution of the current problems, effectiveness of the struggling methods against the natural disasters, improvement methods of the fruit and berry realization system as well as the economic estimation of the efficiency of the strategies of horticulture development in Armavir region.

The scientific novelty of the thesis and the main outcomes are related to the tasks put forth in the framework of the investigation; they are the following:

- The factors and their peculiarities determining the efficiency of fruit and berry production in Armavir region at RA have been evaluated,
- As a result of econometric analyses, the impact size of different factors (fertile areas for fruit and berry in the region, the average yield capacity, commodity level, poverty level at RA, agricultural crediting rates by the commercial banks of RA) on the fruit and berry gross product value in Armavir region of RA has been revealed.
- The main improvement directions of fruit and berry realization system have been developed,
- The efficiency of infrastructures proposed for fruit and berries plantation to struggle against the natural disasters has been evaluated,

- Preferable strategic directions for horticulture development in the region have been developed, which include comprehensive database creation and objective information provision, nursery farm development, establishment of scientific and production center, foundation of experimental farms, promotion of cooperation development, sale and export stimulation, as well as legislative framework improvement.

In the first chapter of the thesis the importance and development tendencies of horticulture have been introduced, the RA agrarian reforms and agricultural characteristics, as well as the natural and economic peculiarities of Armavir region have been also introduced.

In the second chapter of the thesis the economic issues and the peculiarities of horticulture development in Armavir region of RA have been investigated, the factors influencing the efficiency of horticulture have been introduced, the quantitative estimation of the impact of those factors through econometric analyses have been presented, the opportunities of solving the issues on horticulture development in Armavir region have been disclosed, as well as SWOT analyses have been carried out in order to handle the problems and issues on horticulture development in the region.

In the third chapter of the thesis the current state of infrastructures for protecting the fruit and berry plantations from natural disasters have been introduced, the efficiency of the operating infrastructures have been evaluated, the world practice has been studied, the improvement ways of the realization system have been worked out, as well as the economic efficiency of the recommended measures has been evaluated and the strategic directions of horticulture development have been introduced.

The implemented activities aimed at the solution of the problems for the development of horticultural sector and the key results of investigation introduced in the thesis are of theoretical and practical importance, which can serve as a baseline for the state policy development applied in the investigated branch, for programs development, as well as for the scientific research investigations related to the research subject.